Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ոսկեվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Մոտիվացիան, որպես ուսուցման կարևորագույն մաս»

Մենթոր՝ Անանյան Նաիրա

Ուսուցիչ՝ Գրիգորյան Լուսինե

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Մոտիվացիայի ուսումնասիրության տեսական հիմքերը……5
3. Մոտիվացիայի վրա ազդող գործոններ……..……6
4. Անձնական փորձառություն…….……12
5. Եզրակացություն 20
6. Առաջարկություն……..…..……22
7. Օգտագործված գրականության ցանկ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հաջողության ամենափորձված ճանապարհը

շարունակաբար ևս մեկ անգամ փորձելն է: »

Թոմաս Էդիսոն

Թեմայի արդիականությունը: Այժմ մանկավարժության մեջ լայն տարածում է գտել «ուսումնական մոտիվացիա» հասկացությունը: Չնայած այս հասկացությունը հանգամանորեն ուսումնասիրվել է, այնուամենայնիվ ունի լրացուցիչ հետազոտման կարիք:

Սովորողը անհատ է և յուրաքանչյուր անհատ ունի իր մոտիվացիան շրջապատող աշխարհը ընկալելու և ճանաչելու հարցում: Ուստի այն պահանջում է անհատական մոտեցում: Մոտիվացիան ձևավորվում է ոչ միայն սովորողների տարիքային, այլ նաև բնավորության առանձնահատկություններով: Այսպիսով, սովորողի ուսումնական մոտիվացիան կարող է տարբեր լինել՝ կախված նրանց տարիքից և նույնիսկ տրամադրությունից: Դրա համար էլ գոյություն ունի մոտիվացիայի երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր: Հաճախ սովորողների մոտ նկատվում է մոտիվացիայի նվազում կամ բացակայություն: Վերջին ժամանակներում նկատվում է սովորողների շրջանում ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության անկում, ինչը լուրջ խնդիր է ոչ միայն ծնողների, այլև ուսուցիչների ու հոգեբանների համար: Նոր աշխարհը իր հետ առաջ է բերում նոր պահանջներ, նոր խնդիրներ, հետևաբար նաև նորովի մոտեցում: Ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողները չեն ենթարկվում ճնշումների, ուստի նախորդ սերունդների համար աշխատած մեթոդներն այժմ չեն տալիս ցանկալի արդյունք և պետք է քայլել ժամանակին համընթաց:

Ընդհանուր ձևակերպմամբ, մոտիվացիան ազդակ է, խթան, որը սովորողին մղում է դեպի սահմանված նպատակակետ: Սովորողների մոտիվացիայի վրա մեծ է ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը: Այդ գործոնները կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այստեղ կարևոր է նաև դեռահասների հասունության զգացումը, որն արտահայտվում է նրանց մոտ անկախության, սեփական արժանապատվությունը հաստատելու ցանկությամբ, իր ես-ը առաջնորդելու գաղափարով: Այդ գործոններից է նաև սովորողի շփումը հասակակիցների և ուսուցիչների հետ: Ուստի մեծ է ուսուցչի դերը սովորողների մոտիվացիայի բարձրացման գործում, քանի որ ուսուցիչը ճանաչելով իր

աշակերտներին կարող է առաջադրել այնպիսի խնդիրներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են նրա հետաքրքրությունների հետ: Եվ սա, շատ հաճախ բացահայտում է նաև սովորողի պահանջմունքները, քանի որ սովորողը երբեմն չգիտի ինչ է ուզում ինքը, ըստ այդմ չունի նաև կոնկրետ նպատակներ:

Ուսուցման պրոցեսում հետաքրքրությունների դերը չափազանց մեծ է: Այն սովորողին մղում է ուղիներ և միջոցներ որոնել իր մեջ ծագած հարցերին պատասխան տալու համար: Այսինքն, սովորողի մոտ ուսումնական մոտիվացիայի բարձրացումը և կայուն մակարդակի վրա պահելը նպաստում է ուսումնական գործընթացի բարելավմանը: Մոտիվացիան սովորողին հնարավորություն է տալիս հասնել հաջողության, ինչպես նաև հաղթահարել ուսուցման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները: Սովորողի հաջողության հասնելու գրավականը դրական հուզական մթնոլորտի առկայությունն է և վստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Այսպիսով, հարկ է ուսումնասիրել մոտիվացիան՝ որպես սովորողների ուսուցման կարևորագույն մաս:

Հետազոտական հարց.

Արդյո՞ք ուսուցման համագործակցային ժամանակակից մեթոդներով դասավանդումը նպաստում է սովորողների մոտիվացիայի խթանմանը:

Հետազոտության նպատակ.

Պարզել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման ազդեցությունը սովորողների հետաքրքրության ավելացման և ուսումնական մոտիվացիայի բարձրացման վրա:

Հետազոտության խնդիրները.

1. Վերլուծել ուսումնական մոտիվացիայի կարևորությունը ուսուցման գործընթացում:
2. Դիտարկել սովորողների ուսումնական առանձնահատկությունները և մակարդակը:
3. Կիրառել համագործակցային մեթոդներ և վերլուծել սովորողների ներգրավվածությունը, համատեղ աշխատանքը:

Մոտիվացիայի ուսումնասիրության տեսական հիմքերը

Մոտիվացիան առաջացել է լատիներեն Moveo բառից, այսինքն՝ շարժվող: Առաջին անգամ «Մոտիվացիա» բառը օգտագործել է գերմանացի փիլիսոփա, գրող Ա. Շոպենհաուերն իր «Բավարար պատճառի սկզբունքի քառակի արմատի մասին» (1900-1910) աշխատության մեջ: Հետագայում այն դարձել է հիմնական հասկացություններից մեկը, որով բացատրում են մարդու և կենդանու վարքը: Կան մոտիվացիայի բազմաթիվ տեսություններ, սակայն մոտեցումները նույնն են ՝ կենտրոնանում են մարդու պահանջների վրա: Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս հնուց: Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է տարբեր ձևերով և կան սահմանման մի շարք տարբերակներ: Մոտիվացիան որոշակի էներգետիկ համակարգ է, որը ձգտում է լիցքաթափել, բավարարել այն շարժառիթներն ու պահանջմունքները, որոնք կազմում են մոտիվացիայի էությունը (Григорович Л.А., Марцинковская Т. Д. Педагогика и психология: Учеб. пособие. — М.: Гардарики, 2003. - 480 с. , էջ 337): Մոտիվացիան գործընթացների համակարգ է, որը պատասխանատու է խթանող գործունեության համար, ինչն էլ պահանջում է այնպիսի հասկացություն, որը կկառուցի այդ համակարգը և, որպես այդպիսին, առանձնացվում է պահանջմունքը՝ որպես մոտիվացիայի միավոր (Зоткин Н. В., Серебрякова М. Е. Общая психология. Психология мотивации и эмоций. Самара: Изд-во. «Универс групп», 2007 - 196 с., էջ 23):

Մոտիվացիան ցանկացած գործունեության հիմքն է, այդ թվում՝ կրթական: Վ.Ա.Սուխոմլինսկին ասել է. «Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով ավելի լավ գիտի, թե ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»: Մեկ այլ մոտեցման համաձայն էլ, որի հեղինակը Է. Լոկն է (1968)՝ մարդու մոտիվացիան որոշվում է նրա նպատակներով և աշխատանքի արդյունքին հասնելու բավարարվածությամբ: Ըստ Վրումի՝ անհատները նախընտրում են այն վարքագիծը, որը նրանց կտանի այն արդյունքին, ինչը նրանք արժևորում են:

Աբրահամ Մասլոուի մոտիվացիայի տեսությունը՝ որպես առաջատար շարժառիթ, նշում է անհատի շարունակական զարգացման ձգտումը: Նա փորձել է որոշել և դասակարգել մարդկային հիմնական պահանջմունքները հիերարխիայի տեսքով, որը հաճախ անվանում են Մասլոուի պահանջմունքների բուրգ: Մասլոուի կողմից առաջարկած հիերարխիան հետևյալն է՝



Մոտիվացիայի վրա ազդող գործոններ

Եվ խոսելով մոտիվացիայի տեսությունների մասին, մենք չենք կարող չանդրադառնալ անձի հետաքրքրություններին, պահանջմունքներին, ինչպես նաև դրդապատճառներին: Շատ հաճախ մասնագիտական գրականության մեջ պահանջմունքն ու դրդապատճառը նույնացվում են :

Պահանջմունքները նորմալ կենսագործունեության և հոգեկան ակտիվության համար անհրաժեշտ երևույթ է, արժեքի կարիք: Յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի, այդ թվում նաև մարդու հոգեկան ակտիվության հիմքում ընկած է պահանջմունքները: Պահանջմունքն, առաջ գալով, մարդուն մղում է ակտիվության կամ նույնիսկ նպատակասլաց գործունեության: Պահանջմունքները ընկած են մարդու հոգեկան ակտիվության հիմքում: Մարդը ակտիվ է այնքանով, որքանով նա ունի պահանջմունքներ, որոնք անհրաժեշտ է բավարարել:

Հոգեբանության մեջ պահանջմունքները դասակարգվում են տարբեր չափանիշներով՝

- Ըստ ծագման առանձնացնում են *բնական* և *մշակութային* պահանջմունքներ:

Բնական անվանում են այն պահանջմունքները, որոնք նրան տրված են ի ծնե: Մշակութային պահանջմունքները ձավորվում են անձի օնտոգենետիկ զարգացման և սոցիալականացման ընթացքում: Մշակութային պահանջմունքներն ունեն սոցիալ-պատմական բնույթ:

- Ըստ պահանջմունքների բավարարող առարկաների տարբերում են մարդկային պահանջմունքների երկու տեսակ՝ *նյութական* և *հոգևոր:*

  Նյութական պահանջմունքները բավարարվում են նյութական առարկաների օգնությամբ:

  Հոգևոր պահանջմունքները բավարարվում են հոգևոր մշակույթի արժեքների օգնությամբ:

  Պահանջմունքի կոնկրետ դրսևորումը դրդապատճառն է:

  Դրդապատճառը հոգեկան երևույթ է (միտք, մտապատկեր, հույզ կամ դրանց համակցությունը), որը ակտիվություն է հարուցում՝ դրդելով մարդուն գործողությունների կամ դրանց իրագործման միջոցների ընտրության: Դրդապատճառը մարդու այս կամ այն վարքի սուբյեկտիվ պատճառն է: Հոգեբանության մեջ ընդունված է այն տեսակետը, որ դրդապատճառները պահանջմունքների կոնկրետ ու հուզականորեն հագեցված դրսևորումներն են կյանքի որոշակի իրադրություններում: Որպես դրդապատճառ կարող են հանդես գալ բնազդները, մղումները, տեսակետները, համոզմունքներն ու դիրքորոշումները, աշխարհայացքային տարրերը, որպես նպատակ՝ ընտրված արտաքին առարկաներն ու իրադրությունները:

  Ըստ Պետրովսկու՝ դրդապատճառները անձին դեպի գործունեություն մղող այն ուժերն են, որոնք կապված են նրա մոտ որոշակի պահանջմունքների բավարարման հետ: Եթե պահանջմունքները մարդու ակտիվության բոլոր ձևերի էությունը, «մեխանիզմն» են կազմում, ապա դրդապատճառները հանդես են գալիս որպես այդ էության կոնկրետ դրսևորումներ: Անհատի պահանջմունքների և դրդապատճառների ուսումնասիրությունը հենց նրա բնույթի՝ էության կարևոր կողմերից մեկի ուսումնասիրությունն է: Դրդապատճառների գոյությունը մարդուն տալիս է որևէ ընտրություն կատարելու հնարավորություն: Մարդու ցանկացած քիչ թե շատ բարդ գործունեություն ունի մեկից ավելի դրդապատճառներ և հաճախ

բավարարում է դարձյալ մեկից ավելի պահանջմունքների: Գործունեության այդ դրդապատճառների խմբի համատեղ աշխատանքը հենց անձի մոտիվացիան է, նրան գործունեության դրդումը, նրան շարժման մեջ դնելու երևույթը:

Դդրդապատճառները կարող են լինել գիտակցված և չգիտակցված, վերջինները հաճախ անվանում են մղումներ (Պետրովսկի Ա. Վ. - Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974): Գիտակցված դրդապատճառներն իրենց հերթին տարբեր պահանջմունքների դրսևորումներ հանդիսանալով՝ ընդունում են հետաքրքրությունների,համոզմունքների,ձգտումների ձև: Գիտակցված դրդապատճառների պարագայում անձը հստակ գիտի ինչու է կատարում այդ գործողությունը:

Չգիտակցված կամ ենթագիտակցական դրդապատճառներն են հակումները, դիրքորոշումները,հոգեկանի ենթագիտակցական և հուզականորեն հագեցվածբովանդակությունները:

Հետաքրքրությունները մարդու իմացական պահանջմունքների հուզական դրսևորումներն են: Դրանց բավարարումը նպաստում է գիտելիքներում եղած բացերի վերացմանը, ալելի լավ կողմնորոշվելուն, հասկանալուն, ձեռք բերած փաստերի հետ ծանոթանալուն (Պետրովսկի Ա. Վ. - Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974): Հետաքրքրությունը դրական գունազարդված հուզական գործընթաց է (Изард, 2009, Характеристики эмоции интереса, էջ 105), իսկ ըստ Ալեքսեյ Լեոնտևի կարգաբանության՝ զգացմունք: Հետքրքրության տակ հասկացվում է պահանջկոտ վերաբերմունք կամ մոտիվացիոն վիճակ, որը դրդում է ճանաչողական գործունեության: Հետաքրքրությունն անձի ակտիվության կարևորագույն դրդապատճառներից է, ձևավորվում է, երբ նյութական ու հոգևոր արժեքները անձի համար սուբյեկտիվ նշանակություն են ստանում, առաջացնում դրական հույզեր: Հետաքրքրության բավարարումը սովորաբար չի հանգեցնում նրա չքացմանը, այլ խորացնում ու առաջացնում է նոր հետաքրքրություններ, որոնք, որպես դրդապատճառներ, էլ ավելի են ակտիվացնում անձին:

Առանձնացվում են հետաքրքրության հուզական և կամային կողմերը: Հուզական կողմի տակ ենթադրվում է ինտելեկտուալ հույզը, կամային կողմի տակ՝ մտավոր դժվարությունների հաղթահարման ջանքերը (Большой психологический словарь, 2009, с. 247.):

Հետաքրքրությունները կարող են դասակարգվել ըստ բովանդակության, նպատակի, լայնության և կայունության:

Հետաքրքրությունները ըստ նպատակի հատկանիշի լինում են անմիջական և միջնորդավորված: Անմիջական հետաքրքրությունները առաջ են գալիս նշանակալից օբյեկտի հուզական գրավչությամբ, իսկ միջնորդավորված հետաքրքրությունը իմացական պահանջմունք է, որի դրսևորումները միջնորդավորված են գործունեության նպատակի գիտակցմամբ:

Հետաքրքրությունները տարբերվում են նաև իրենց լայնությամբ: Որոշ մարդկանց մոտ դրանք կարող են կենտրոնացված լինել մեկ բնագավառում, մյուսների մոտ բաշխված են լինում առանձին բնագավառների վրա:

Հետաքրքրության կայունությունը արտահայտվում է, երբ ի հայտ է բերվում անձի հիմնական պահանջմունքները: Կայուն հետաքրքրությունը մարդու արթնացող ընդունակության վկայություններից մեկն է: Այսպիսով, ուսուցման գործընթացում կարևոր է պահանջմունքների, դրդապատճառների և հետաքրքրությունների դերը ուսումնական մոտիվացիայի բարձրացման համար: Սրանք միասին կազմում են մի շղթա, որի ցանկացած օղակի բացակայություն կբերի ուսումնական մոտիվացիայի անկման:



Վերադառնալով թեմային, նշեմ, որ 2021թվականին Տավուշի մարզում փորձարկման դրված հանրակրթության պետական նոր չափորոշիչը հնարավորություն է տալիս և՛ ուսուցչին, և՛ աշակերտին ժամանակակից

մեթոդներով, նորարարական մոտեցումներով և տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել ուսումնական գործընթացը, ինչն էլ իր հերթին խթանում է սովորողների մոտիվացիան:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը հենվում է 8 առանցքային կարողունակությունների վրա: Դրանք են՝

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն
6. Մշակութային կարողունակություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8. Տնտեսական կարողունակություն

Ի՞նչ է կարողունակությունը:

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է: Այն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքների բաղադրիչ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծել որոշակի խնդիրներ: Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է, դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին հաջողությամբ լուծել իր առջև ծառացած խնդիրները: Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականապես ձևավորված արդյունք: Այն շարունակական գործընթաց է, որի ժամանակ նշված որակներն անընդհատ կարող են կատարելագործվել:

Կարողունակությունների ձևավորման համար սահմանվում են վերջնարդյունքներ: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքները պետք է լինեն հստակ ձևակերպված, հասանելի և չափելի: Նշված վերջնարդյունքները շարունակական զարգացում են ապրում նշված կրթական տարբեր աստիճաններում: Այսպիսով, վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Հանրակրթական դպրոցում գործող ներկայիս չափորոշիչներում և ծրագրերում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև

սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Այս ամենը առաջին հերթին պայմանավորված է

ուսումնական մոտիվացիայով: Իսկ ուսումնական գործունեության նկատմամբ դրական մոտիվացիա ստեղծելու և զարգացնելու հարցում մեծ է ուսումնական հաստատության գործունեության դերը, ուսուցչի կիրառած համագործակցային արդյունավետ մեթոդները և հմտությունները, ուսուցչի արտահայտիչ խոսքը, ուսումնական նյութերի բովանդակության ընտրությունը, դասարանում տիրող առողջ մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները և այլն:

Ուսումնական մոտիվացիայի բարձացման գործընթացում կարևոր է նաև սովորողների անհատական առանձնահատկությունները: Ուստի դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամերի կազմակերպումը: Ելնելով իմ անձնական փորձից ,վերը նշել եմ, որ ավանդական մեթոդները ցանկալի արդյունք չեն ապահովում և անհրաժեշտ է նորովի մոտեցում,զանազան մեթոդների կիրառում, որը սովորողին պասիվ դաշտից կբերի ակտիվ դաշտ:

Ի՞նչ է ուսուցման մեթոդը:

Ուուսցման մեթոդը առաջացել է հունարեն metodos բառից, որ նշանակում է ճանապարհ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող: Եթե փորձենք ընդհանուր առմամբ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Ուսուցման մեթոդն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝

- Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակությունը)
- Ի՞նչի համար սովորեցնել (կրթության նպատակները)
- Ի՞նչպես սովորեցնել (կրթության մեթոդիկա):

Այս բոլորի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, որոնք, հանդիսանալով ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ, կապ են ստեղծում ուսուցման պլանավորած նպատակի և վերջնարդյունքի միջև: Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում ինտերակտիվ կամ համագործակցային մեթոդների արդյունավետ կիրառման մասին:

Ինտերակտիվ (անգլերեն inter՝ փոխադարձ, act՝ գործողություն) նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Այսպիսով, ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:Աշակերտները

համագործակցային միջավայրում կառուցում և զարգացնում են իրենց գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը և արժեհամահարգը, այսինքն՝ չափորոշչի հիմքում ընկած կարողունակությունները և դա իրականացնում են խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու, հարցեր տալու, դիմացինին լսելու և նրա կարծիքի հետ հաշվի նստելու միջոցով:

Անձնական փորձառություն

Այժմ ուզում եմ կիսվել անձնական փորձով: Հետազոտություն իրականացրել եմ 6-րդ դասարանում, մայրենիի դասաժամին: Որպես դասղեկ նշեմ, որ քաջ ծանոթ եմ սովորողների վարքային խնդիրներին, նախասիրություններին և առաջադիմությանը, գիտեմ իրենց հնարավորությունների սահմանները, ինչը ինձ թույլ է տալիս արդյունավետ համակարգել ուսումնական գործընթացը:

Դասաժամերին կիրառում եմ զանազան մեթոդներ Պիտի նշեմ, որ մեթոդների ընտրության հարցում ուսուցիչը ազատ է : Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել, քանի որ մեթոդի կիրառման բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է, այլ մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացման հասնելը:Ուստի անհրաժեշտ է դասից հետո անդրադարձ կատարել, վերլուծել կատարված աշխատանքը, պարզել, թե ուսուցիչը հասավ արդյո՞ք դասի նպատակին,արդյո՞ք ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն ապահովված են և ի՞նչ չափով, ճի՞շտ էին ընտրված մեթոդները, արդյոք ճի՞շտ էին ընտրված առաջարկվող գործունեության ձևերը(բխում են նպատակից, ծառայում են վերջնարդյունքների ապահովմանը):

Նախքան հետազոտության արդյունքների ներկայացնելը ուզում եմ նշել, որ դասարանում տարեսկզբին եղել է 11 աշակերտ(3 տղա, 8 աղջիկ), նոյեմբերին դասարանը համալրվել է Արցախից եկած մեկ աշակերտով (աղջիկ) : Աշակերտները արագ ընկերացան, քանի որ նախքան այդ աշակերտի մեզ միանալը, դասղեկի ժամերին աշակերտների հետ զրուցել եմ այդ մասին: Ընդհանուր առմամբ ակտիվ դասարան է, դպրոցական միջոցառումներին մշտապես ներգրավված են,

հաճախում են տարբեր խմբակների՝ նկարչություն, կարպետագործություն, կավագործություն, ֆուտբոլ, թեաքվոդո, հրաշալի պարում են ու երգում (ոչ բոլորը):

Այժմ անդրադառնամ կոնկրետ դիտարկված դասաժամերին:Այդ դասաժամերին կատարել են խմբային աշխատանք զանազան մեթոդների կիրառմամբ: Խմբային աշխատանքի ժամանակ շեշտը դրել եմ տվյալ խմբում սովորողների տարիքային

առանձնահատկությունների և ակտիվ մասնակցության վրա: Խմբում յուրաքանչյուր սովորող հստակ արտահայտել է իր դիրքորոշումը: Նշեմ նաև, որ խումբը ձևավորել եմ տարբեր կարողությունների տեր սովորողներից: Նման աշխատանքի ժամանակ սովորողների մոտ ձևավորվում և զարգանում է սովորել սովորելու կարողունակությունը և ոչ միայն: Այսինքն՝ այս կարողունակության զարգացումը շատ կարևոր է սովորողների ինտեգրման հարցում: Համատեղ աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր սովորող հանդես է գալիս սովորողի և սովորեցնողի դերում: Սա ուսումնառության համար լավ խթան է հանդիսանում և առաջ է բերում հետաքրքրություն՝ չիմացածը իմանալու, նոր բացահայտումներ և դատողություններ անելու համար: Երբ սովորողը ազատ, անկաշկանդ արտահայում է իր դիրքորոշումը և այն արժանանում է ընկերների և ուսուցչի հավանությանը, ապա սովորողը արժևորված է զգում իրեն, ինչն էլ բարձրացնում է ուսումնական մոտիվացիան: Կից ներկայացնում եմ դիտարկված դասաժամերի պլանավորումը.

Դասի պլանավորում

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Դասի թեման՝ «Նոյ նահապետի տապանը Արարատի վրա» (ըստ Աստվածաշնչի):

Ձ-ծ-ց բաղաձայնների ուղղագրությունը:

Դասի նպատակը՝

- Զարգացնել հասկանալով կարդալու և կարդացածը վերարտադրելու կարողություն
- Ներկայացնել զրույցի դերը ազգային արժեքների պահպանման և սերունդների դաստիարակության գործում
- Ամրապնդել բառակազմական վերլուծությամբ բառերի արտասանության և գրության առանձնահատկություններ

Դասի վերջնարդյունքը՝

- Կարդա զրույցի տեքստը հասկանալով և վերարտադրի
- Ընկալի զրույցի դերը որպես ազգային արժեք և հիմնավորի
- Մատնանշի բառերի արտասանության և գրության տարբերությունները, բառակազմական վերլուծությամբ ապացուցի բառերի ուղղագրությունը:

Խնդիրներ՝

- Կարդալ և վերարտադրել զրույցի բովանդակությունը տրված հարցերի օգնությամբ
- Տեղեկություններ գտնել Նոյ նահապետի և Արարատ լեռան մասին
- Կարծիք հայտնի զրույցի մասին, հիմնավորի, թե ինչո՞ւ է Արարատը համարվում սուրբ լեռ
- Գրել անծանոթ բառերի բացատրությունը, բաց թողած կետերի փոխարեն գրի ձ-ծ-ց և կատարի բառակազմական վերլուծություն

Կատարել եմ խմբային աշխատանք և կշռադատման փուլում ընտրել եմ քառաբաժան մեթոդը կամ Ֆրայերի մոդելը: Քառաբաժանի կենտրոնում գրել եմ մի խմբի համար «Արարատ լեռ» , մյուս խմբի համար «Նոյ նահապետ» , ապա չորս անկյունում գրել եմ հարցեր, և տվյալ հարցի տակ սովորողները շարադրել են իրենց պատասխանները: Այսպիսին է եղել քառաբաժան մեթոդը և իմ կաղմից ձևակերպված հարցերը՝



Աշխատանքի ժամանակ խմբում եղել է հստակ դերաբաշխում, այսինքն խմբի ներսում եղել է աշխատանքի բաժանում, և յուրաքանչյուր սովորող ամենայն պատասխանատվությամբ կատարել է իրեն առաջադրված աշխատանքը:

Սովորողներին տրվել է հստակ ժամանակ ինչպես աշխատելու , այնպես էլ աշխատանքը ներկայացնելու համար: Աշխատանքը ավարտելուց հետո լսարանի առջև երկու խումբն էլ հանդես է եկել բանավոր գրագետ խոսքով:

Գնահատումն իրականացվել է փոխադարձ ձևավորող գնահատմամբ, քանի որ սովորողները ծանոթ են իմ գնահատման սկզբունքներին, ուստի կարողացան հեշտությամբ գնահատել մյուս խմբի աշխատանքը, իհարկե, մի փոքր վերապահումով: Դասարանում խիստ արտահայտված մրցակցություն չկա, տիրում է այնպիսի մթնոլորտ, որ սովորողները ուրախանում են մեկը մյուսի հաջողությամբ (դասարանում ունենք աշակերտ Արցախից և կարճ

ժամանակում երեխաները ընկերացան, նրանց ուրախացրեց իրենց դասընկերուհու ստացած բարձր գնահատականը թեմատիկ գրավոր աշխատանքից): Անշուշտ, սա կարևոր ձեռքբերում է և հետևողական աշխատանքի արդյունք:

Դասի ավարտին դիտել ենք տեսանյութ Նոյ նահապետի մասին և տրվել է հետադարձ կապ: Սովորողի մոտիվացիայի բարձրացման կարևոր գործոն է նաև հետադարձ կապը, որի ժամանակ իմ կողմից մատնանշվել են սովորողների հաջողությունները թեմայի ընկալման, համատեղ աշխատանքի, գրագետ խոսքի կառուցման, ժամանակի կառավարման վերաբերյալ: Իհարկե, նշել եմ նաև թերացումները:

Դասաժամը ընդհանուր առմամբ հաջողված էր, սովորողները կարողացան կատարել առաջադրված հանձնարարությունները, իհարկե որոշ թերացումներով: Այսինքն, ճիշտ էին սահմանված դասի նպատակները, վերջնարդյունքները և վերջինիս ապահովմանը միտված խնդիրները:

Հաջորդ դասաժամը, որը դիտարկել եմ 6-րդ դասարանում, «Արշակ և Շապուհ» զրույցի հերոսների համեմատական բնութագիրն է, ինչպես նկատեցիք ընտրված դասաժամերը ոչ միայն ժամանակակից մեթոդներով սովորողների մոտիվացիայի բարձրացումն է, այլ նաև արժեհամակարգ ձևավորելը (ճանաչել և պահպանել ազգային արժեքները):

Դասի պլանավորում

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Դասի թեման՝ «Արշակ և Շապուհ», գլխավոր հերոսների համեմատական բնութագիրը

Դասի նպատակը՝

- Զարգացնել հերոսներին բնութագրող հատվածները գտնելու կարողություն
- Ներկայացնել զրույցի դերը ազգային արժեքների պահպանման գործում

Դասի վերջնարդյունքը՝

- Տեքստում գտնի հերոսներին բնութագրող տողերը
- Համեմատելով բնութագրի հերոսներին, ձևակերպի եզրակացություն

- Արժևորի զրույցի դերը ազգային արժեքների պահպանման գործում

Խնդիրները՝

- Տեքստից դուրս գրել Արշակին և Շապուհին բնութագրող հատվածները:
- Տեքստից դուրս գրել մարդու բնավորությունը նշող բառեր, ավելացնել նման այլ բառեր ևս և դրանք դասակարգել ըստ աղյուսակի:
- Գրի հակիրճ շարադրանք «Ի՞նչն է ուժ տալիս Արշակ արքային» վերնագրով:

Խթանման փուլում մտագրոհի միջոցով սովորողները ներկայացրել են հանձնարարված դասը: Նոր դասը հնի շարունակությունն էր: Այսպիսով, սովորողները ծանոթ էին տեքստի բովանդակությանը և ակտիվորեն ներգրավվեցին նոր դասի քննարկմանը:

Իմաստի ընկալման փուլում T-աձև աղյուսակի միջոցով կարողացել են տեքստից դուրս գրել մարդու բնավորության դրական և բացասական գծերը անվանող բառեր, ինչպես նաև նոր բառեր ավելացնել երկու շարքում էլ: Աշխատանքը կատարել են զույգերով: Ժամանակը արդյունավետ օգտագործելու համար զույգից մեկը տեքստից դուրս է գրել դրական գծերը, մյուսը՝ բացասականը: Աշխատանքի ավարտին յուրաքանչյուր զույգ ներկայացրել է իր աշխատանքը, իսկ մյուսները իրենց կազմած բառաշարքերում ավելացրել են այն բառերը, որոնք իրենք չէին գրել՝ ամբողջացնելով շարքը:

Կշռադատման փուլում գրել են հակիրճ շարադրանք «Ի՞նչն է ուժ տալիս Արշակ արքային» վերնագրով: Սովորողները կարևորել են հայոց հող ու ջրի ուժը, հայ

մարդը պաշտպանված ու ամուր է զգում իրեն՝ ոտքի տակ ունենալով հայոց հողն ու ջուրը:

Կատարել եմ միավորային գնահատում և անդրադարձ կիսատ նախադասությունների միջոցով.

Ես այսօր սովորեցի….

Ինձ հետաքրքրեց….

Այս դասի ամենաօգտակար բանը….

Մի բան, որ չհասկացա….

Հաջորդ դասը, որի ընթացքում ևս կատարել եմ դիտարկում թեմայի ամփոփման ժամ է եղել և նույն խմբային աշխատանքի տրամաբանությամբ , պարզապես այլ մեթոդի

կիրառմամբ միտված է եղել ուսումնառության մոտիվացիան կայուն մակարդակի վրա պահպանելը: Նշեմ, որ այս դասին ներկա է եղել նաև քիմիայի ուսուցչուհին, այս պարագայում ՀՄԿ-ի կողմից մեր դպրոցին կցված մենթորը, ով իր հերթին նշել է քիմիական նյութերի վնասակար ազդեցությունների մասին: Այստեղ կարևորել եմ միջառարկայական կապը և համագործակցել եմ բնագետի հետ: Ներկայացնում եմ այդ դասի պլանավորումը ևս:

Դասի պլանավորում

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Դասի թեման՝ Ամփոփում «Սևանա լիճ»

Դասի նպատակը՝

- Ներկայացնել Սևանի մասին գիտական տեղեկություններ և վեր հանել հիմնախնդիրները
- Տարբերել գիտական և գեղարվեստական տեքստերը
- Ձևավորել վերաբերմունք հայրենի եզերքի հանդեպ

Դասի վերջնարդյունքը՝

- Վեր հանի Սևանի հիմնախնդիրները և նշի լուծման ճանապարհները
- Իմանա Սևանա լճի գիտական տեղեկություններ, համեմատի զրույցի հետ:
- Արժևորի Սևանի դեր
- Կազմի գրագետ կապակցված խոսք՝ կիրառելով յուրացրած բառերը:

Խնդիրները՝

- Տեքստից դուրս հանել Սևանի հիմնախնդիրները
- Նշել լուծման ուղիները
- Գտնել գիտական և գեղարվետսական տեքստի տարբերությունները (T-աձև աղյուսակով)
- Կետերով նշել ի՞նչ դեր ունի Սևանա լիճը մեր երկրի համար

Անցած դասաժամերին ուսումնասիրել էինք Սևանա լճի մասին գիտական և գեղարվեստական տեքստեր, համացանցից լրացուցիչ տեղեկություններ էին հավաքագրել սովորողները: Ինչպես դասագրքի տեքստերը, այնպես էլ իրենց կողմից

հավաքագրված տեղեկությունները և՛ գիտական էին, և՛ գեղարվեստական(լճի անվանումների մասին զրույցներ):

T-աձև աղյուսակի միջոցով սովորողները նշել են գիտական և գեղարվեստական տեքստերի տարբերությունները: Այնուհետև դասարանը բաժանել եմ երկու խմբի (խմբերը կազմում եմ ոչ պատահականության սկզբունքով): Երկու խմբին էլ հանձնել եմ նախապես կազմած առաջադրանքները m-աձև աղյուսակով: Առաջադրանքը հետևյալն է.

Սևանա լիճ		
Սևանի հիմնախնդիրները	Լուծման ճանապարները	Իմ գործողությունները

Սովորողները օգտվելով իրենց հավաքած նյութից և դասագրքից, համապատասխան սյունակում կատարել են գրառումներ:Խմբում կար աշխատանքի բաժանում, բոլորն աշխատում էին: Տրվել է հստակ ժամանակ: Աշխատանքը ավարտելուց հետո խումբը լսարանի առաջ հանդես է եկել բանավոր գրագետ խոսքով:

Աշխատանքի ընթացքում խմբերից մեկում շփոթ էր առաջացել լուծման ճանապարհները և իմ գործողությունները հարցադրումները հստակ ձևակերպելու մեջ, ինչը իմ ուղղորդմամբ շտկվեց:

Սովորողները նշել են Սևանա լճի կարևորության մասին (այն երկրագնդի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է Հարավային Ամերիկայի Տիտիկակա լճից հետո, ունի բացառիկ էկոհամակարգ) :Սևանա լիճը հանդիսանում է Հայաստանի ամենամեծ քաղցրահամ ջրային պաշարը, քաղցրահամ ջրի համաշխարհային պաշարները սահմանափակ են և մեծ

արագությամբ սպառվում են: Քաղցրահամ ջրի պաշարների նվազումը կապեցին իրենց համայնքում խմելու ջրի սակավության խնդրի հետ և կատարեցին եզրահանգում՝

- խնայողաբար օգտագործել ջուրը
- աղբ չթափել
- արգելված ժամանակաշրջանում որս չկատարել
- նույնը հորդորել ընկերներին

Այսպիսով, սովորողները հասկացան,որ Սևանի հիմնախնդիրները բոլորինս են, Սևանը ունի բոլորիս հոգածության կարիքը և մեզնից յուրաքանչյուրը կարող է փրկել Սևանը՝ այն չաղտոտելով, որսագողությամբ չզբաղվելով:

Կատարված աշխատանքը ամփոփելով հարց ուղղեցի դասարանին.

-Ինչպիսի՞ն եք պատկերացնում Սևանը ապագայում:

Սովորողները տվեցին հստակ պատասխաններ, որոնք կարելի է մեկ ընդհանրացնող նախադասությամբ, ամփոփ ներկայացնել. «Սևանը ապագայում պակերացնում ենք թերակղզին կղզի դարձած»:

Հաջողված դաս ունենալու գրավականը ճիշտ ընտրված մեթոդներն են և առաջարկվող գուրծունեության ձևերը:

Աշակերտները նաև գեղեցիկ նկարներ էին արել՝ պատկերելով Սևանա լիճը, թերակղզին, վանքը, Գեղամա լեռները և Խոսրովանուշին ու Գեղամին: Դասաժամին արված դիտարկումները և նկարները էքսկուրսիայից ստացած անմիջական տպավորությունների արդյունք էին: Էքսկուրսիան ճանաչողական դաս է՝ դասարանի պատերից դուրս, ինչը սովորողի մոտ առաջ է բերում տեսած և լսածը լավագույնս ընկալելու հնարավորություն՝ իրեն հաճելի միջավայրում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մոտիվացիայի մասին եղած տեսությունները, եկա այն համոզման, որ թեման այսօր էլ արդիական է: Նոր ժամանակաշրջանը նոր մոտեցում է պահանջում, ուստի անհրաժեշտ է ժամանակակից մեթոդների կիրառմամբ բարձրացնել և պահպանել ուսումնական մոտիվացիան: Խմբային աշխատանքի ժամանակ խմբում եղել է աշխատանքի բաժանում, ինչը կարևոր է ժամանակի կառավարման տեսանկյունից:Սովորողներին հաջողվել է համատեղ արդյունավետ

աշխատել և օգնել ընկերներին: Դասաժամերին օգտագործել եմ քարտեզ, ցուցադրել տեսանյութ, ինչը ևս նպաստել է մոտիվացիայի բարձրացմանը: Սովորողները նյութն ընկալում են տարբեր կերպ, ուստի անհրաժեշտ է կիրառել ՈՒՀՁ-ի 3 ուղենիշները: Դրանք են՝

- նյութի ներկայացման ձևերի բազմազանություն(ներկայացրո՛ւ տեղեկությունը տարբեր ձևերով)
- գործելու և գիտելիքներն արտահայտելու ձևերի բազմազանություն (տարբերակի՛ր ձևերը, որոնցով սովորողներն արտահայտում են գիտելիքը)
- ներառման ձևերի բազմազանություն (մոտիվացրո՛ւ, հետաքրքրի՛ր)

Ուսումնառության ձևավորումը կրթական մոտեցում է, որը թույլ է տալիս ուսումնառության բոլոր փուլերում կրթական միջավայրը, ուսումնական ծրագրերը, դասավանդման մոտեցումը, ուսումնառության գնահատումը հարմարեցնել սովորողների բազմազան կարիքներին և առանձնահատկություններին՝ պահպանելով բարձր ակնկալիքներ և մատչելիություն բոլոր սովորողներ համար:
Սովորողներին մոտիվացնելու կարևոր գործոն է նաև ուսումնական նյութը իրական կյանքի հետ կապելը՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը: Այսինքն՝ կարևոր է սովորողների կողմից կրթության կարևորության գնահատումը: Սովորողին պետք է մոտիվացնել լավ օրինակներով և սովորողը պետք է հասկանա, որ ուսումնական գործընթացում գրանցած հաջողությունները ինքնանպատակ չեն, որ ինքը պիտի ստացած գիտելիքներն ու կարողությունները կիրառի կյանքում և այն ապահովելու է իր հետագա բարեկեցությունը:
Ուսումնական գործընթացում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է նաև ընդգծել և տեսանելի դարձնել նպատակները և վերջնարդյունքները, խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցումը, ինչպես նաև տրամադրել մոտիվացնող և դրական հետադարձ կապ: Յուրաքանչյուր դասի ավարտին կատարել եմ անդրադարձ կիսատ նախադասությունների և հարցադրումների

միջոցով:
Դիտարկված դասաժամերին սովորողների մոտ ձևավորվել և զարգացել է նոր չափորոշչի հիմքում ընկած հետևյալ կարողունակությունները, մասնավորապես՝ լեզվական գրագիտություն, սովորել սովորելու, ժողովրդավարական և քաղաքացիական , մշակութային, թվային և մեդիա կարողունակություններ:
Այսպիսով, ուսուցման գործընթացում համագործակցային և ժամանակակից մերթոդների կիրառումը սովորողների մոտ առաջ է բերում հետաքրքրություն, ինչն էլ

հանգեցնում է մոտիվացված լինելուն, իհարկե, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ փոխել մոտեցումները և կիրառվող մեթոդները:

Ուսուցման գործընթացում սովորողի հետ հետադարձ կապի ապահովումը կարևոր է սովորողի ուսումնառության որակի բարելավման համար:Հետադարձ կապը օգնում է պարզելու, թե որքանով են սովորողները հասել դասի վերջնարդյունքներին:

Ամփոփելով խոսքս, ուզում եմ մեջ բերել ամերիկացի հոգեբան, փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուիի կրթության սկզբունքների սահմանումը՝ որով և առաջնորդվել եմ.

- Ուսուցումը և գիտելիքների յուրացումը պետք իրականացվեն ակտիվ և ոչ թե պասիվ հենքի վրա:
- Կրթության ոլորտում մոտիվացիան շատ կարևոր ազդակ է:
- Ուսուցման ժամանակ շեշտը պետք է դնել իրական խնդիրների վրա:
- Սովորողների հետազոտական ազատությունը ուսուցման մեթոդիկայի կարևոր տարր է:
- Կրթության նոր բովանդակության անընդհատ փնտրտուք պետք է իրականացնել:
- Ուսուցիչը կոչված է լինելու ստեղծագործ անհատ որևէ ոլորտում:

Մոտիվացիայի բարձրացման համար պետք է սահմանել նշաձող և աջակցել սովորողին հասնելու սահմանված նպատակին: Ի վերջո, մոտիվացիան հսկայական դրական էներգիա է ծնում, որը օգնում է հասնել նպատակին, պարզապես պետք է սովորողին ուղղորդել:

Առաջարկություն

Առաջարկում եմ՝

- սովորողների ուսումնական մոտիվացիան բարձրացնելու համար դասաժամերին կիրառել համագործակցային և ժամանակակից մեթոդներ՝ հիմքում դնելով ՈՒՀՁ-ի ուղենիշները:

- հաշվի առնել սովորողների նախասիրությունները, սովորողին հանձնարարել այնպիսի առաջադրանք, որը կբխի նրա հետաքրքրություններից:
- ապահովել հետադարձ կապ , նշել սովորողի ձեռքբերումները՝ առաջացնելով դրական հուզական մթնոլորտ, նշել նաև թերացումները, ինչը կառաջացնի չիմացածը իմանալու պահանջմունք և այն բավարարելու ցանկություն:
- կազմակերպել էքսկուրսիաներ՝ որպես ճանաչողական դաս:

Օգտագործված գրականություն

1. Григорович Л.А., Марцинковская Т. Д. Педагогика и психология: Учеб. пособие. — М.: Гардарики, 2003. - 480 с. , էջ 337
2. Зоткин Н. В., Серебрякова М. Е. Общая психология. Психология мотивации и эмоций. Самара: Изд-во. «Универс групп», 2007 - 196 с., էջ 23
3. Маслоу Н.Х. Мотивация и личность. Мастера психологии – Питер,
4. Сухомлинский В.А. Учитель - методист - наставник. - М.: Просвещение, 1988

5. Պետրովսկի Ա. Վ. - Ընդհանուր հոգեբանություն, Երևան, 1974
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%BF%D5%AB%D5%BE%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1#%D5%8E%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8_%D6%87_%D5%BD%D5%BA%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
7. Изард, 2009, Характеристики эмоции интереса, էջ 105
8. Большой психологический словарь, 2009, с. 247.
9. Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան -Ուսուցչի ուղեցույց տետր, Երևան, 2009
10. Ջոն Դյուի, Կրթության սկզբունքները